



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«12» հուլիսի 2022թ.

ՀՐԱՄԱՆ N 346-Ա

«ՏՐԱՆՍԱՎԻԱ ՖՐԱՆՍ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի ապրիլի 22-ի N 182-Ա հրամանը և «Տրանսավիա Ֆրանս» ավիաընկերության 2022 թվականի հունիսի 16-ի գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նկատի ունենալով, որ «Տրանսավիա Ֆրանս» ավիաընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածում՝ 2022 թվականի ապրիլի 23-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 29-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ՝ Փարիզ/LFPO/-Երևան/UDYZ/-Փարիզ/LFPO/ երթուղով Հայաստանի Հանրապետություն տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային

օդային հաղորդակցությունների իրականացմամբ Ընկերության կողմից դիմումի ներկայացման օրվա՝ 2022 թվականի հունիսի 16-ի դրությամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված չսպասարկված ուղղությունների և չվերթերի հաճախականությունների պահանջներին՝ Երևան/UDYZ/-Փարիզ/LFPO/ երթուղով մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «գ» ենթակետով սահմանված արտոնությունը:

2"Սահմանել, որ սույն հրամանի առաջին կետով նշված արտոնության տրամադրման սկիզբը 2022 թվականի հուլիսի 13-ն է՝ 36 ամսով:

3"Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի հանձնումն Ընկերությանը:

4"Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

 Recoverable Signature

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ